Պ-504-06.03.2020-ԱՍ-011/0 **ԼՐԱՄՇԱԿՎԱԾ**

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության ~~Աշխատանքային~~ 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 105-րդ հոդվածի՝

~~1-ին մասում «աշխատանքի էական պայմանները» բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2.1 եւ 2.2-րդ կետերով նախատեսված դեպքերի:» բառերով:~~ լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ի մասով.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում աշխատանքի էական պայմանները չեն կարող փոփոխվել նվազ բարենպաստ պայմանների, բացառությամբ պաշտոնի անվանման և (կամ) տարակարգերի:»:

Հոդված 2. Օրենսգրքի 114-րդ հոդվածը 1-ին մասի 2~~1).~~.2-րդ կետից ~~շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~հանել «3-րդ,» թիվը, իսկ «8-10-րդ» թվերը փոխարինել «8-րդ և 10-րդ թվերով»:

~~«2.1) հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո երեխայի մեկ տարին լրանալը, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ կետերով նախատեսված դեպքերի.»:~~

Հոդված 3. Օրենսգրքի 171-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) հայրության արձակուրդը:»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել նոր 176.1. հոդվածով.

«**Հոդված 176.1. Հայրության արձակուրդը**

1.Երեխայի ծնվելու օրվանից հետո 30 օրվա ընթացքում նորածնի հոր ցանկությամբ տրամադրվում է 5 աշխատանքային օր տևողությամբ վճարովի

արձակուրդ՝ ~~գործատուի հաշվին,~~ որի յուրաքնաչյուր օրվա համար վճարվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափով:»:

Հոդված 5. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: